

Վիէննայի Մխիթարեանց 398 թիւ Ոսկեփորիկ-Հաւաքածոյն որ ըստ Հ Տաշեանի ժէ-ժԸ դարերէն է թղ. 2A ա ունի տաղ մը՝

Տաղ պլպուլի եւ ի վարդին :

որ կը սկսի —

Պլպուլն ի վարդն ասաց խիստ անողորմ ես ,
Որ զիմ արիւնս քեզ հալալ կու զնես . . . եւլն .
եւ կաւարտի թղ. 2Aա . :

ԹՈՐՈՍ գովէ զվարդն ու զպլպուլն ,
Որ խիւրոյ դամ կու քաշին ,
Մեղքն թողած է ԹՈՐՈՍԻՆ ,
Եւ լսողաց ամենին : (*)

Բնական է հոս շիտթութիւն մը կայ : Այս տաղը ծանօթ է իբր Մկրտիչ Նաղաշի հեղինակութիւն : Հաւանաբար երկու տաղեր ինկած են թերթերը իրար խառնուելով Վիէննայի թիւ 398 օրինակողէն ; կամ թէ նոյն իսկ այդ ձեռագրին մէջ թերթեր ինկած են , եւ ցուցակագիր Հ. Տաշեան առանց ուշադիր ըլլալու իրարու շարունակութիւն նկատած է Նաղաշի տաղին սկիզբը եւ Թորոսի տաղին վերջը : Ատոր կարելի է ուշադիր ըլլալ նոյն իսկ տաղին վերջ տրուած սկզբնաւորութեան եւ վերջաւորութեան տողերուն յանդաթիւերէն :

Սակայն մեր այս կարծիքին հաստատութեան համար ամեն կասկած կը փարատէ Երուսաղէմի մեր վանքին թիւ 3052 ձեռագրին Թորոսի տաղը որուն վերջաւորութիւնն է որ մնացեր է Վիէննայի թիւ 398-ի մէջ եւ Հ. Տաշեանի անուշադրութեամբ խառնուեր է Մկրտիչ Նաղաշի տաղին սկզբնաւորութեան :

Արդ հոս իբր վերցերորդ տաղ կը ներկայացնեմ Թորոսի՝

2

ՏԱՂ ՎԱՐԴԻ ԵՒ ՊԼՊՈՒԼԻ

Երբ քաֆուր վարդն փըթթի ,
Մըտիկ արէք այն պլպուլին ,
Չտերեւըն զարկեր ը իւր վրան .
Չօրը՞ կենաց ի վրայ յարդին :

(*) Ցուցակ էջ 851ա . :